խմենք այն հոգևոր վիմից, որը մեզ հետ շրջում է և է ինքն Քրիստոս, ինչպէս այդ տեղի ունէր առաքելոց ժամանակ։ (Կորնթ. ա. Գլ. ժ—4.) Մեր գործն ու աշխատանքը նախ պէտք է ուղղուած լինի այն խոչնդոտների դէմ, որոնք մեզ զրկում են մարդկանց արթուն խղճի հետ գործ ունենալուց, որոնք սոսկալի արգելք են դառնում Աստուծոյ արդարութիւնն ու ձայնը մարդկանց սրտի մէջ սերմանելու և արդիւնաւորելու գործին։ Եւ ինչպէս որ և է բան գրելու համար բացի գրչից և թանաքից հարկաւոր է մաքուր թուղթ, այնպէս էլ Աստուծոյ Բանն ու արքայութիւնը գրելու և մարմնացնելու համար՝ հարկաւոր է զգաստ ուղեղ և արթուն՝ ոչ մի բանով չը թմրեցրած խիղճ։ Այդ էր պահանջում Փրկիչն իւր բոլոր հետևողներից, այդ էր որոնում, այդ էր ցանկանում ասել, երբ կրկնում էր, որ եթէ մանկան նման չդառնանք, չենք կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել։ Ո՛չ. ոչ թէ ժառանգել, այլ և հասկանալ և ըմբռնել՝—կասենք մենք։

Ս. Ծ. Վ. Մ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Փետրվարի 25-ին Թիֆլիզից Սուրբ Էջմիածին վերադարձաւ ազգիս Վեհափառ Հայրապետը։ Նորին սրբութեան ուղեկցում էին Յուսիկ և Կորիւն վարդապետները։ Կայարան ընդառաջ էր եկել Վանական կառավարութեան նախագահ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց օթևանել ս. Հռիփսիմէի մօտ հանգուցեալ Երեմիա եպիսկոպոսի շինած բնակարանում։ Մարտի 3-ին Վեհափառը մեկնեց Երևան, ուր առաջուց ուղարկել էր Սինոդի անդամ դերապատիւ Յովհաննէս

եպիսկոպոս Շիրակունուն և Յոսիկ վարդապետին խորին շնորհակալութիւն յայտնելու Երևանի նահանգապետ կոմս Տիզենգաուզենին և զօրաց հրամանատար Իշխան Օրբելեանուն նրանց ձեռք առած եռանդուն միջոցների համար, որոնցով յաջողուեց պահպանել խաղաղութիւնը Երևանում և նահանգում, և շուտով վերջ տրուեց Երևանի անկարգութիւններին։

Կարգ և խաղաղութիւն չը խանգարելու համար Հին-Նախիջևան ուղարկուեց տ. Դարեգին վարդապետը, որին և պատուիրուեց այցելել Ագուլիս և Օրդուբաթ՝ խաղաղութեան հրաւիրելու թուրք և հայ ազգաբնակութեան։

Փետրվարի 24-ին Կարս մեկնեց տեղւոյն նորահաստատ Փոխանորդ տ. Մամբրէ վարդապետը. իսկ Արսէն վարդապետ Ղլիճեանը ժամանակաւորապէս ուղարկուեց Աղէքսանդրապոլ ժողովրդին մխիթարելու և խաղաղութիւն քարոզելու։

Մարտի 3-ին իւր պաշտօնավայրն ուղևորուեց Նուխուայ յաջորդ տէր Եղիշէ վարդապետ Ահարոնեանը։

Հայ և մահմեդական ազգաբնակութեանը սէր և համերաշխութիւն քարոզելու համար Իգդիր ուղարկուեց տէր Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը, որը պտոյտ գործելով Սուրմալուի գաւառում, Էջմիածին վերադարձաւ մարտի 2-ին։

Թաւրիզից ստացուած հեռագիրներից երևում է, որ փետրվարի 27-ին պատգամաւորական ժողովում միաձայն

Առրպատականի առաջնորդ է ընտրուել Ս. Էջմիածնի միաբան գերապատիւ Բարդուղիմէոս եպիսկոպոսը։

Մայր Աթոռոյս իրենց պաշտօնավայրն ուղևորուեցին Կիւրեղ և Թովմա վարդապետները, որոնցից առաջինը նշանակուած է Աղէքսանդրապոլի, իսկ միւսը Հին Նախիջևանի փոխանորդ։

ՏԱՃԿԱՀԱՅՊ

Արևելքից տեղեկանում ենք, որ Երուսաղէմի հ. Վանքի ելևմտից նախկին տեսուչ Ղևոնդ վարդապետ Մագուտեանը հեռագրով կանչուած է Պոլիս։ Նոյն Վանքի ելևմտից նոր տեսուչ Մատթէոս վարդապետ Գայլրդճեանը մի տեղեկագիր է ներկայացրել ս. Պատրիարքին, որի մէջ նկարագրել է իւր նախորդի՝ Ղևոնդ վարդապետի գործունէութիւնը։ «Աղէքսանդրիոյ հողի վաճառումից գոյացած դրամի մէկ մասը՝ 6000 ոսկու չափ Ղևոնդ վարդապետ բեռոդին վճարելի բաց պօնոյի մը փոխարէն, յանձնած էր Ցունաց Վանքին և մի քանի ամիս առաջ վերուցեր է այն տեղէն, և հիմա կըսէ եղեր, թէ «շինութեանց գործածեց»։ Բոլոր իրեն յանձնուած որոշ գումարներու համար կըսէ, թէ «շինութեանց գործածեց»։ բայց այս շինութեանց փոխարէն տակաւին խոշոր պարտքեր կան, և Վանքը խիստ փոքր մաս մը միայն կընդունի Ղևոնդ վարդապետի ձեռամբ կատարուած շինութեանց եկամուտէն։ Մատթէոս վարդապետի տեղեկագրէն կ'երևի թէ այս «շինութիւնք» յատկապէս ստեղծուած պատրուակ մ'էին ղեղծումները պարտկելու»։

Արարատի անցեալ տարուայ համարներից մինում մենք տպագրեցինք Երուսաղէմից ստացուած մի թղթակցութիւն ի պաշտպանութիւն ս. Ղևոնդ վարդապետի, թէև ստացանք երկու հերքում լոյս տեսած յօդուածի դէմ, բայց տարաբաղդաբար տպագրելու հնարաւորութիւն չունեցանք։ Եթէ հաստատ